


ՏԻՐ ԵՒ ՏՆՈՐԻՆ

Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ սր եւ է գրութիւն պետք է ուղղել առ Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի ԳԱԼԻԻԷ (Նու Նահաստի) Թիւ.

E. TOROSSIAN  
Direc.-prop. du journal arménien  
ARCHALOUICE  
LE CAIRE (EGYPTE)  
Boite Postale No.



Լ Ի Ա Գ Ի Բ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասիկն	60
Վեզանետայ	» 35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐ	
Տարեկան ծրակն	20
Վեզանետայ	» 12

ՔԱՃԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆՆԻԿ Եւ թղթատարի ծախքը հոլադոստրաքանի վրայ է:

Խոլադոստրաքանի ուղղում զոտքիսն էս է՛նն տրուի:

ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԿ Կանխիկ վճարելի են

ՇՈՐԱԿԱԶՄ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
«ԱՐՇԱԼՈՅՍԻ»  
ՀԻՐԵՆԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԳԻ ՍԿԻՋԸ

Օրակնիկի դեղատանիկի դիւնացի փողոցիկն Վնք.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երգարտականներ, Գիրքեր, Հրատարակչութիւններ, Մանկագիրքներ, Կանոնագիրքներ, Տոմարներ և այլ և այլ փափու ապրանքներ, յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտաշուծիւն և չափաւոր գին:

ՎՃԱՎՈՒՄԻՆԻՐԸ ԿԱՆՆԻԿ ԵՆ:

Ա Յ Ժ Մ Ե Ո Ւ Թ Ի Ի Ն

Մեր թերթի ընդհատումէն ի վեր, ինչպէս հետզհետէ պիտի տեղեկանանք, եւ գիտատի ազգային այժմեական կեանքին մէջ բաւական շարժում և գործունէութիւններ կը տեսնուին:

Ազգ. քանդակաւոր սկսելով և մեր լսածներուն հետեւելով, պիտի կրնանք ըսել թէ՛ այնտեղի ազգային գործոց վարչներուն մէջ թիւրիմացութիւններն այնչափ բազմացած և ընդարձակ ծաւալ գտած են, որ ոմանց կարծիքին նայելով, այդ թիւրիմացութիւններն անոնց մէջէն բառնալու համար պարտաւոր միջամտութիւններու պետքը պիտի զգացուի, եթէ արդէն, հարկ եղած գեմալները ի գործ դրուած չեն:

Գարձեալ Ազգ. քանդակաւոր մէջ՝ երկու ժողովրդական հաստատութիւններն— ժողովրդական—Մատենադարան և Աւսումնարան իրարու հետ միացնելու համար, ոմանց կողմէ եղած ջանքերն գրեթէ ապարդիւն մնացած են և պատճառներ ունին. հաւատարութիւն թէ՛ դեռ շատ ոչ ձեռք պիտի բերուի այդ կարեւոր և փափաքելի համաձայնութիւնը:

Գահիրէ ալ ազատ չէ այդ կարգի այժմեականութիւն ունեցող ինդիւիւստրիալ շարքէ մը և ասոնցմէ ոմանք խաղաղութեան մէջ հետզհետէ իրենց լուծումը կրտանան:

Գալստեան վարժարանը, որ Վոսի. հողաբարձու Ասենապետ Պէյնի հրատարակումէն ի վեր գրկուած էր հոգաբարձուական խնամքներէ, վերջերս այդ պահաւոր լրացուած է եղեր, նոր հոգաբարձուներու ընտրութեամբ մը:

Նորընտիր հոգաբարձուներէն մին Տիար Նշան Մալումեան, ասկէ 3-4 տարիներ առաջ միւսնոյն ազգային պաշտօնը վարած է մեծաւ յաջողութեամբ և այս ամենուն ալ ծանօթ է. ուստի պատճառ մը չ'մնար հաւատարութիւն անոր փորձառութիւններէն պէտք եղած չափով պիտի օգտուի ազգային այն ամենակարեւոր հաստատութիւնը, որուն մինչև ցարգ վարժարան անունը կուտայինք:

Տիար Մալումեանի մնացեալ երկու ընկերները, որչափ ալ իրենց կոչումին անհամապատասխան կարծեն ոմանք, մենք կը սիրենք յուսալ թէ՛ հետեւելով իրենց փորձառութեան ընկերով իմաստուն խորհրդոցը, միւսնոյն չափով իրենք ալ կրնան օգտակար հանդիսանալ ազգային մանկուսնի դաստիարակութեան գործին:

Ասոնցմէ զատ թղթակից մը անցեալ թուով կ'աւերտէր մեր ընթերցողաց թէ՛ նոր թերթ մ'ալ պիտի ունենանք. թերթ որուն երկու կարեւոր գերբեր միանգամայն չ'նորհուած են. մին՝ յաւաքիմական. այսինքն ժողովուրդը զարգացնել ընթերցանութեամբ, իսկ միւսը՝ նահատարական. այսինքն, թերթին արտագրած շահուն վրայ հիմնել Լատին Քրիստոսարարանի շէնքն և ատով անոր ներկան ու ապագան ապահովել . . . :

Մենք այժմէն ի սրտէ յաջողութիւն կը ցանկանք անոր, որչափ որ ալ նոր ձեռնարկը անտարամբանական և անուղիղ բայելքով խճողուած ըլլայ:

Առաջնորդական ինդիւիւս ալ ոչ նուազ միտքերը կը զարգեցնէ:

Ռոտոսթոյնի վրայ ձեռնագրուած Այվազեան վարդապետը, որ միւսնոյն քաղաքի ժողովրդեան հաւանութեամբ և ծախքերով Եպիսկոպոս ձեռնագրուած է, Կեդր. Կրօնական ժողովի կողմէն դժուարութեանց կը հանդիպի Եպիսկոպոսի թեմը հովուելու համար իր և Եպիսկոպոսի հայերու ոմանց ունեցած փափաքը իրաւորութեամբ պահուն:

Քննելու հարկ չ'կայ թէ Կեդր. Կրօնական ժողովըն ո՞ր աստիճան իրաւունք ունի իր ըրած առարկութեանցը մէջ:

Մենք մեր տասը տարեկան հասակէն իսկ դիտենք թէ վարդապետ մը իր եպիս-

կոպոս ձեռնագրուած վիճակին հետ այնպէս կապուած կըլլայ, ինչպէս հայ եկեղեցւոյ խորհրդոց կառավարման երկու ամիսները իրարու հետ կը կապուին ցմահ: Ուրիշ բան է թէ՛ տալին պարագային մէջ, արտակարգ և չ'նախատեսուած պատահականութիւններ արդեւք հանդիսանան:

Ասկէ ուրեմն կրնանք հետեցնել թէ՛ Կեդր. Կրօն. ժողովին առարկութիւններն ո՞չ թէ իրենց վատ արամարդութիւններէն կը ծնին, այլ Տեղւոյ Պատ. Երեսփոխան ժողովոյն օրէնքի անտեղեկ ըլլալէն և մանաւանդ ամիրայական հովերէն:

Այժմ Փաշաները մեկնած են, իրենց տարեկան դադարը վայելելու համար Եւրոպեան ճոխութեանց մէջ, ուրեմն Կեդր. Կրօն. ժողովի առարկութեանց ո՞ր և է կերպով պատասխանել անկարելի պիտի ըլլայ, և որչափ այս վիճակը տևէ, նոյնչափ ալ Եպիսկոպոսի թեմին Առաջնորդական Խորհուրդի փուլը ու երեքեալ տատանեալ պիտի մնայ:

Իրաւ է թէ՛ ինչպէս ասկէ առաջ ըսած ենք, իրաց այս անկերպարան կացութիւնը ոմանց համար շատ ձեռնառու է, սակայն մեկուն յաջողութիւնը ուրիշի մը քայքայումը կ'ենթադրէ:

Ուրեմն Ազգային այս այժմեական շարժումներով շատ անգամներ զրաղիւր իր մասնաւոր օգուտները պիտի ունենայ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն Ա Մ Ա Կ Կ Ո Ս Տ Ա Ն Գ Ն Ո Ւ Պ Ո Ղ Ս Է

ՄԵՐ ՄԱՍՆԱԻՐ ԹՂԹԱԿՑՆԸ

Կ. Պոլիս 19 Մայիս 1900

«Պոլսոյ ազգային, ընկերական կեանքէն գրէ՛ Արշալոյսին մէջ» կ'ըսէ ինծի բարեկամս, որու հրաւերին անսալով յանձն կ'առնեմ Արշալոյսին մասնաւոր թղթակիցը ըլլալ:

Ազգային, ընկերական կեանք . . . Պոլսեցի մը անտիքիպէս պիտի հասկնար, կարգալով այդ խօսքերը, թէ 3-4 տարիէ ի վեր հոսկէ Վիսակ նաւակով լուր աւանդ մէկն է որ գրած է զանոնք ու իրաւ, ինչ ազգային և ընկերական կեանք կը կարծէք որ մնացած ըլլայ հոս այդ քանի մը տարիներէն ի վեր. հիմակուան մեր ազգային և ընկերական կեանքը բացարձակապէս ոչինչ է. զրական կեանք մը շատոնց է որ չ'ունինք. խեղճ ու կրակ օրաթերթները որ մեր Գրական ժողովը յազմեցնելու են կոչուած, ինչպէս կ'ըսեն, իբր ինքիս ներու կատարեալ ու անթերի հաւաքածոյ մը, կրնան ամենքն ալ իրենց տեսակին մէջ առաջին մը բացանակ ստանալ Արդէն յառաջիկային:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

այդ մասին գրելիքնս պիտի սահմանուի մեր հիմնական խորագրական կեանքին տեսնու ներք քիչ մը վեր աւելուուն մէջ, ու ներքեք որ այդ բա- նը չ'ընեմ առաջին թղթակցութեանս մէջ խօսի:

Պոլսոյ հայերուն ազգային կեանքին (քանի որ ասանկ կ'ուզէք) մէկ ամենէն յատկանշական երեւոյթը, կիրակնօրեայ դաստիարակութիւններն են, ընդհանրապէս սոքէտ ուսուցիչներու կողմէ ճգնագոյն (եթէ բարձր գոյութիւն չ'ունի, ներքեք) ուսուցիչներու եղած. աս մասին կարծէ սակայն անբող թղթակցութիւն մը գտնելու տխրօտակա գալ անգամուան կը պահել:

Մնացած մասը ազգային կեանքերնու... Պատրիարքն է, այո՛ Պատրիարքը ինք եւ ոչ թէ Պատրիարքարանը ու անոր գործունէութիւնը քանի որ աս բաները շատոնց իվեր գոյութիւն չ'ունին):

Մեր Օրմանեան պատրիարքը ճշմարիտ կե- գաւանսիւնն է եղաւ հին պատրիարքներու սերուն- գէն ո՛ր եւ է պատրիարքի մը. հաստ, հետզհետ ու- ունելու հակամեծ, արեւոյ չ թէ 5 ստորուան շրջա- նին մէջ միակ գործը եղաւ, ամենները՝ գիւղերը բնակող աս ու ան հարուստ շոջին առեւը ինք- զինքը հրաւիրել, սորա ու բիւրա ուսելու, եւ ձեռնները Պոլսոյ 42 եկեղեցիներու ցանկը քրքրել առնոց տոնախմբութեան օրերը գտնելու եւ պա- տարագրելու: Իբր պատրիարք, միակ ըրած բանը գաւառներէն եկած նաւակները կարգալը եղաւ, ամենքն ալ խղճմտօրէն, ու ամեն մէկուն ետեւը գրել. «յանձնարարեալ կրօնական ժողովին» կամ «նպաստից յանձնաժողովին», առանց ինք իր կողմէ ո՛ր եւ է գործունէութիւն մը, չնչին նախա- ձեռնութիւն մը ընելու, ինքրուած բան մը կա- տարելու համար:

Աւ եղաւ որ, երբ լաւ մը բռնեք բռնեց (այսինքն 8-10 հաս քարուկի տուն 4 սարուան մէջ) մարդուկը մտածեց հրաժարիլ... Կիրակնօրեայ կաթողիկոս ըլլալու համար:

Պատրիարքէն վերջը, խօսուող նիւթը «փա- խուսանեմ» են, հասակի բարձր պաշտօնասարմե- րուն մէջ հաւանաբար ինկերէ փախչելու ն. վե- նափառութեան ձեռքէն, ու երկու շարաթ շարու- նակ իտալի Վէլուալ Պէյին, հարաւաւոր(?) Մու- րատ Պէյին, Ռատիկանական նախարար Շէֆիք պէյի աղուն, չեմ յիշեր ի՞նչ Պէյին ու ուրիշ շատ մը Պէյերու փախուստը լսեցինք մինակ:

Հիմազ պարոզականներու ջարդն է որ անոնց յաջորդեց. պարբերական անհետացումներէն Հարպիթի մէջ՝ նորէն հատ մը, չեմ գիտեր քանի հոգի ու այս անգամ ընկերացած զինուորական բժշկական վարժարանէն ալ 10 հոգի մը ան- հետացուանով կը տեսնէք որ երկիրնիս շատ աղտոտ վիճակի մէջ է ու անդորրութիւնը կը տիրէ... Եւ թէ՛ նորին վեհափառութիւնը բոլոր կարելի եղած միջոցները իզոթ կը գտնէ նոր հասած սյժե- րուն ուսուցումներն համար:

Եւ սակայն հակառակ բոլոր հալածումնե- րուն, թուրք ժողովուրդը ամեն ատենէ աւելի գրգռուած վիճակի մէջ է, միակ յանձանքնին ցեղին ինքնին ոչինչ ցեղ մը ըլլալն է. ոյժը չ'ունին մեծ մարդեր արտաբերու ու Սուլթանը իրենց ամենէն խելացի մարդն է, եւ կը թուի թէ չեն ուզեր անկից զրկուիլ... :

Վերջին լուրը որ կը շրջի, Գէորգ Եպո- քրեցեանին պատրիարք ըլլալու հաւանաբարութեան լուրն է, ինծի համար ատիկայ բացարձակապէս անկարելի է, հակառակ Արթին բաշային բաղ- ձանքներուն. ո՛վ գիտէ սակայն, ինչ որ ստոյգ է ամեն պարագայի մէջ, սա է թէ՛ Օրմանեան Պատրիարք դեռ հրաժարականը ետ առած չ'է: ց'անուութիւն յաջորդ անգամ:

Յ. ԹՈՌՆԻԿ

ԱՄԵՐԻԿԱ ԵՎ ՊՕԼՐ ՊԱՏԳՄԱՄԱՌՆԵՐԸ  
Երեք Մերակուտականներէ, երեք Ե- րեսիոնականներէ և բազմաթիւ քաղաքացի- ներէ բազկացեալ յանձնաժողով մը Պօէր պատգամաւորներու ընկերակցութեամբ Նիւ Եորքէն Ուաշինկթօն մեկնած են:

Երկու հարիւր հոգիէ բազկացեալ պատ- գամաւորութիւն մը կայարանին մէջ պիտի ընդունի Պօէր պատգամաւորութիւնը և պի- տի ընկերանայ անոնց մինչև իրենց իշխանած պանդոկը, ուր տեղի պիտի ունենայ ոչ-պաշ- տօնական ընդունելութիւն մը:

Պօէր պատգամաւորները նախագահ Մակքինլիի այցելութիւն պիտի տան:

Պատգամաւորները նախագահ Գրիւկէ- րէն հետեւեալ հեռագիրը ընդունած են:

«Տա՛ր Աստուած որ արդարորիւնը եւ իրատունը Ձեզ հետ ըլլար»:

Վերջին հեռագիրներէն կը տեղեկա- նանք թէ՛ Ուաշինկթօնի կառավարութիւնը բացարձակ մերժմամբ մը պատասխանած է:

ՌՈՒՄՈՅ ՉԱՐԻՆ ՏԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ- ՆԵՐԸ. — Փէթէրպուրկէն Մակսեպուրիյի Չայրուկի լրագրին կը հեռագրեն թէ՛ հա- կառակ Չարին տեղափոխութեանց վրայ չըլած զանազան լուրերուն, հիմակուրէն որոշուած է թէ՛ նիքօլա Բ. Օրդոստու ամ- սոյն մէջ ներկայ պիտի գտնուի Բօլժոնոյ մէջ տեղի ունենալիք մեծ ռազմավորձե- րուն, ինչպէս նաև որոտրդութեանց պիտի մասնակցի գարձեալ Բոլժոնոյ մէջ. և յետ այնու ի վրայտիա արքունիքը պիտի երթայ:

Այս տարի Չարին ի Տարմշիթա այ- ցելութիւնը տեղի չ'պիտի ունենայ, այնպէս որ Գերմանական թերթի մը գրածներուն համաձայն, Չարը Յուլիս ամսոյն մէջ միայն պիտի կրնայ այցելել Փարիզի ցուցահան- դէսը:

ԱՒՏՏՐՈՒԱ. — Երեսիոնական Իւկրոն և Մաճառ ազգային կուսակցութիւնը կատարի պայքար մը կը մղեն ընդդէմ երրեակ նի- զակակցութեան և որոշած են մամուլի և ժողովրդական միջոցներու միջոցաւ ալ զօրեզապէս յառաջ տանիլ սկսուած պայ- քարը: Աստիք կ'ամբաստանեն մանաւանդ երրեակ նիզակակցութիւնը, յարելով որ՝ երրեակ նիզակակցութիւնը պարզապէս գա- ւակցութիւն է ժողովուրդներու դէմ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐԿԱՐ. — Անցեալ օրկէս օրէ վերջ փրաս սէ գօնսիւղի վրայ ելեքարաչարժ կառ- քը ստակալի կերպով բազկացեալ հրապա- րակի կառքի մը, որուն մէջ կը գրա- նուէին Ֆրանսական Հիւպատոսարանի ա- ռաջին թարգմանին կինը Տիկին Հակկար և իր երկու աղջիկները:

Օրիորդները ստակալի յուզման մէջ ազատուեցան թէև, բայց Տիկին Հակկար ոտքէն բաւական վնասուեցաւ:

ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՐՁՐ ԳՕՄԻՍԷՐԸ. — Նո- րին Բարձրութեան հրամանով առաջին թիկնապահ Ապտիւլ Հալիմ ֆաշա շարաթ օր Հասպայուրի չոյ ենաւր գնաց Օսմանեան

Գօմիսէր Ղազի Մուխթար ֆաշան ողջունե- րու համար:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԺՈՂՈՎՐ. — Երեկ գու- մարուեցաւ Բաւ — Ել — Թիլի պալատին մէջ ընդ նախագահութեամբ Ն. Բարձրու- թեան Խոթիին:

ԱՆԻՈՂՆԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԶՈՂԸ. — Տաւ- ներկու տարեկան տեղացի աղջիկ մը, Պու- լաք գետեղները գրօնելու պահուն, անխո- հեմաբար առաջացած և գետին յորձանուտ մասին մէջ ըջուած է:

Հակառակ անմիջական օգնութեանց դիակը մնայն կըրցած են ջուրէն հանել:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ. — Երկա- թուղեաց վարչութիւնը տեղական թերթերու միջոցաւ կը յայտարարէ ի անալիկայ յունիս 1 էն սկսեալ կէս — Էքսփրէս շոգեկառքերը թիւ 5 — 6 որոց առաջինը առաւօտեան ժա- մը 7 1)2 ին Գահիրէէն և 7 ին Ալեքսանդրի- այէն կը մեկնին երրորդ կարգի ճանապար- ներ չ'պիտի ընդունին:

Երրորդ կարգի վակոնները պիտի կըց- ուին թիւ 13 և 14 ճեպընթացներուն, որոց առաջինը առաւօտեան ժամը 9 1)2 ին Գա- հիրէէն և երկրորդը ժամը 9 ին Ալեք- սանդրիայէն կը մեկնին:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Այրի Տիկին Մ. Ս. Մեղիքեան և որդիք. Տէր և Տիկին Գրիգոր Եագուպեան և Եա- գուպեան Ընտանիքն. Տէր և Տիկին Գրիգոր Գեղմեան. Տիար Յովհաննէս Մեղիքեան. Տէր և Տիկին Փիլիպպոս մեղիքեան. Տիար Մար- տիրոս Մեղիքեան. Տէր և Տիկին Մինաս Գեղմեան. Տէր և Տիկին Կարապետ Գեղմեան Տիար Ապահ Գեղմեան. Տիարք Ասատուր, Տիգրան և Սիմոն Եղբարք Գեղմեան, Տիարք Նշան և Արմենակ Մալումեան. Տէր և Տիկին Միքայէլ Նշանեան. Տիարք Մ. Գէորգ և Վահան Եղբարք Եկաւեան. Տիար Ռուբէն Էքմէքեան. թերթի միջոցաւ իրենց շնոր- հակալիքը յայտնել կը փութան ամեն ազ- գականաց և բարեկամաց՝ որոնք ամսոյս 19ին բարեհաճած էին ներկայ գտնուիլ:

Մ. ՍԱՐԳԻՍ ԱՂԱ ՄԵԼԻՔԵԱՆԻ

յուզարկաւորութեան տխուր հանդիսին և իրենց ցաւակցական զգացումներն արտա- յայտել հանդուցելոյն կողակցին, զաւակաց եղբորորդուց, փեսաներուն, և բոլոր ազգա- կանաց:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

— Պոլիս 22 Մայիս. — Մեծ յուզում մը կը տիրէ Հայկական նահանգներուն մէջ. մանաւանդ Վանի մէջ սուրբերու գանձման մէջ գործուած կեղեքմանց համար, կառա- վարութիւնը յանձնաժողով մը կը զրկէ հար- կահաւաքներուն գործերը ընելու համար:

— Պոլիս 24 Մայիս. — Միացեալ Նա- հանգներու գետապար վերջնագրոյ ձեւին սակ Նօրս մը յանձնեց Բ. Գրան: կառավարութիւնը. Հայաստանի մէջ Ա-

մերիկեան միտիոնարներուն վրայ ի գործ գրուած շարգերուն համար եղած սուգանքին վճարման անմիջական պատասխանը կը պահանջէ:

— Լոնտրա 26 Մայիս — Լորէնցո մարքէզէն առնուած հեռագիր մը կ'սէ թէ՛ ազգեցիկ Պիւրկերներու պատգամաւորութիւն մը նախագահ Քրիկերին գիտեր է, ինչը բերու համար որ իւր հպատակութիւնը յայտնէ Անգլիական բանակին:

Նախագահը պատասխան տուած է թէ՛ այսպիսի որոշում մը բանակի հրամանատարներէն կայսրում ունի:

— Մէքսիկոյ 26 Մայիս. — Պօէրները կամրանան Բօլֆօնթէնի մէջ, որ Մէքսիկոյէն տասը մղոն հեռի է գէպի արեւելք:

— Լոնտրա 26 Մայիս. — Ռիւթերի գործակալութիւնը վարէնթօնէն կը տեղեկանայ թէ՛ Մէքսիկոյ պաշարող Պօէրները քաղաքէն գէպի Բրէթօրիա տասը մղոն հեռու կամրանան, զինուորներուն յառաջխաղացութիւնը արգելելու համար:

Թշնամին Ֆիքսպուրըր և չրջակայքերուն բերը պարպեց:

— Լոնտրա 27 Մայիս. — Մայիս 26 թուականաւ Լորտ Ռոպըրթս Վօլֆիտիքէն կը հեռագրէ թէ՛ Թալուհույն Մենդեան տարեգարձին օրը, Բարիսի մտերէն վալ գետը անցան յառաջադասները: Մեր գիտազօրքերը, կ'ըսէ Ռոպըրթս, այսօր վիւժերն Տրիֆթն են. այս գաւառին հանրերը չեն փաստուած, գետին այս կողմը թշնամի չ'կայ:

— Կ. Պոլիս 27 Մայիս. — Նորին Բարձրութիւն Գօթօճիթօ Խանէ, ձարնահան իշխանը, հոս հասաւ:

— Պրուքսէլ 27 Մայիս. — Օրենսդիր ժողովոյ ընտրութիւնք տեղի ունեցան, անգործութիւնը կատարեալ է ամբողջ Պեճիգայի մէջ:

— Աղեքսանդրիա 27 Մայիս. Առողջապահական վարչութիւնը որոշած է այսօրու ընէ սկսեալ շնչել նաւական առողջապահութեան ծանօթագրութիւնը և ամբողջ առողջապահական միջոցները:

— Լոնտրա 29 Մայիս. — Լուր կը արուի թէ՛ զօրավար Ֆրէնչ Օհաննէսպուրկ մտած է:

— Լոնտրա 29 Մայիս. — Լորտ Ռօպերթս 23 թուականաւ կը հեռագրէ Գիլի Ռիվըրէն. 20 մղոն աւելի յառաջացանք և հիմա Օհաննէսպուրկէն 18 մղոն հեռու են: Թշնամին գիտնալութեան համար շատ մը գիրքեր պատրաստած էր, բայց յաջորդաբար թողուց գիրքերը: Արեւմտեան Աւստրալեացիները այնքան արագութեամբ հասան, որ թշնամին իւր հինգ թնթանթները շագեկաւ գնելու հազիւ ժամանակ ունեցաւ:

Կերեկի թէ՛ Համիլթընի և Ֆրէնչի հեծեալ զինուորները թշնամիին հետ բռնուած են, որովհետեւ կէս օրէն ի վեր հրացանաձգութեան սլոնակ կը լսուի:

— Թէն-Չին 28 Մայիս. — Երեկ Պօպրները Բէրինէ 29 մղոն հեռու Լի-Չօի Երկաթուղւոյ վրայ Լի-Ին-Լինօ սիւսիտներ աչքեցին. ճամբաները քանդեցին և շատ մը Չինացի պաշտօնեաներ սպաննեցին: Կ'ըսուի թէ՛ Բեքիսի վրայ կը քայլեն:

— Փարիշ 29 Մայիս. — Ֆրանսայի պատերազմական նախարար զօրավար Կալիֆէ սուպլանտին պատճառներով իր հրաժարականը մատուց և անոր յաջորդեց զօրավար Անտրէ:

ՔԱՂՈՒԱԾ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԷ

Սուլթանը իրատէ մը հաներ է, նախարարաց խորհրդին հրաման տալով միջոց մը գտնելու. Թուրքիոյ մէջ գտնուած օտար նամակատունները շնչելու, աւելցնելով որ եթէ ատիկա անկարելի ըլլայ, նախարարները գոնէ միջոցներ ձեռք առնելու են որ Օսմանեան հպատակները այդ նամակատուններուն չ'գիտնեն, ծանր պատիժներ սահմանելով անոնց որ անաստեղծ այս տնօրինութեան:

Երիտասարդ Թուրքերու մասին Կ. Պոլսէն Ապրիլ 30 թուականաւ կը հեռագրեն թէ՛ 32 երիտասարդ Թուրք, որոնք ձերբակալուած էին իւր գէտններ, արտորուեր են ներքին նահանգները: Ասոնց չ'է թոյլատրուած ո'ւէ բան մը առնել հետերին, և ոչ իսկ ներուած է իրենց վերջին անգամ ըլլալով գոնէ ծնողքներին տեսնել:

Իսմայիլ Բէմալ պէյ, Անգլիասէր թիւրքը որ Ափրիկեան Տրիպոլի Կուսակալ անուանուած էր ինչ որ գործնականապէս արտրի գատապարտութիւն կը նշանակէ, յաջորդ է անգլիական շոգենաւ մը ապաստանել ու անգլիական զեռարմին պաշտպանութիւնը վայելելով Եւրոպա անցնել: Սուլթանը այս փախուստէն ալ վրդովեց է: Երիտասարդ Թուրքերու կազմակերպութիւնը սկսած է ըլլանալ:

Պուլսէն Տէյլի Թեյէկրաքի կը հազարդեն թէ՛ Տրիպոլիս բանտարկուած 65 քաղաքական յանցարորներ բանտին կառավարիչն ալ մեկտեղ առնելով փախեր են:

ՆՈՐ ԿԵՆՔ

Վեհափառ Հայրապետի առողջութիւնը կազդուրուած ըլլալով, Տփլիսէն Ալեքսանդրապոլ մեկեր է և Երեւանի ճամբով էլ միաժին պիտի գաւնայ, ուր քանի մը օր մնալէ յետոյ Բիւրականի ամառանոցը պիտի քաջուի ժամանակի մը համար:

Մոսկուայի ժամհարեան եղբայրց առատաձեռնութեամբը Մարաշի մէջ բացուած սրբանոցին մէջ արհեստներու ճիւղ մ'ալ հաստատուած է և այժմ որբերուն մուճակներ պատրաստել կ'ուսուցուին:

Ախալքալակի երկրաչարժին նպատամատուց յանձնաժողովը մինչև ապրիլ 1 հաւաքեր է 907, 773 թուրքի: Իսկ նոր եղած նուիրատուութեանց մէջ կը տեսնուին էլիպապէթ Ֆրէտերոզիա Իշխանուհիին նուէրը ու կարմիր խաչի ընկերութեան Մոսկուայի մասնաճիւղին նպատար, ինչպէս նաև Իշխանուհիին հովանաւորութեան ներքեւ Մոսկուա արուած նաւագահանդէսի մը հասցիքը, որոնք բաւական պատկառելի գումարի մը կը յանգին:

Ազգամարտի կաթողիկոսական տեղապահ Տ. Արսէն վարդապետ տեղեկագիր մը

զրկելով Պատրիարքարան, յայտնած է թէ՛ Խիզանէ և ուրիշ շրջակայ գիւղերէն բաւական թուով կիներ իրեն գիմած և յայտարարած են լի, երենց ամուսինները 10-15 տարիներէ ի վեր բացակայ կը գտնուին, և մինչև ցարդ նամակ և նիւթական որ և է օգնութիւն չ'է զրկած, որով ամիջական տնօրինութիւն մը կը ինչպէս Պատրիարքարանէն:

ԻՐԱՆԱՅ

— Օրմանեան պատրիարք գեւ կը պընգէ իր հրաժարականին վրայ հակառակ սուլթանին համոզիչ խոստումներուն. Օրմանեանի հրաժարումին համար Սուլթանը յետաձգել հրամայած է Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը: Պատրիարքարանն ալ Կիլիկիոյ ամեն թեմերուն զերեր խրկած է որ Պէհա Պէյի կամ Պաշի Փաշայի ընտրողական հրաւերին չ'պատասխանեն այլ ընդունին միայն Խաղաւան Եպիսկոպոսին հրաւերը:

— Վեհափառ կաթողիկոսը 120 սուկի գումար մը զրկած է Պատրիարքանին, նպատակ յանձնաժողովին տրամագրութեան տակ գրուելու համար:

— Ռուս կառավարութիւնը նոր Բայազետ գաւառի քսան գիւղերուն համար սրոշխ է 24000 թուրքի փոխատուութիւն մը ընել կերակուրի և սերմնացանի համար: Այս գիւղերուն մեծամասնութիւնը Հայ է, անանկ որ 6000 ազգայիններ՝ որոնք անցեալ տարուան երաշտէն մեծապէս փաստուած էին, պիտի օգտուին այդ փոխատուութեան:

ՆՈՐ ՀԱՍՈՒՆ ՆԱԿԱՆՔԷՐ

Լսարան — Ընթերցատուն Ընկերութեան Մայր գիւմարի Բ. Առեւտագիր Տիար Ե. Բէրէսթէճեան, նոյն ընկերութեան գործադիր ժողովոյն ընտրութեան օրէն ցայսօր բըւնած ապօրէն տրարքները քննադատող թղթակցութիւն մը ուղղած է մեզ, որ տեղւոյ անձկութեան պատճառաւ չարաթ օրուան թուով պիտի հրատարակենք. հրատարակելով միանգամայն գործադիր ժողովն, սրպէսզի այդ դայթակղալի և Ընկերութեան առաջգիմութեանը փաստակար եղող գրութեան իր օրինաւոր պատասխանները սայ:

ՆՈՐԱԿԱԶՄ ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ հաստատութեան և Աջադու Տրատարակութիւնը վերսկսելու մասին ալ բազմակի շնորհաւորական նամակներ մեզ հասած են և հետզհետէ կը հասնին, որոցմէ մէկ քանին բոտ խնդրանաց անոնց հեղինակներուն պիտի հրատարակենք Արշադու Տրատարակայ թիւերով:

ԱԶԳ

Կը ինչքուի մեր թէ՛ տեղական և թէ՛ արտասահմանի Պատուարժան բաժանորդներէն ոչ բարեհաճին չուսով կարգադրել իրենց յետամնաց հաշիւներն, թերթի հրատարակութեան նիւթական գտուարութիւններն մեր վրայէն թեթեւեղեղ ազնիւ և բարի մտածումով:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Փարիզ 21 Մայիս 1900

ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒՌԸ. — Երեկ կիրառու է փարիզի Հայոց ազգային մատուցող ստորինակ իրարանցում մը կար: Իրաւ է թէ նոր հոգեւոր հովուին փարիզ ժամանելէն ի վեր մատուցող որ ամենէն լքուած էր բողոքովին, նոր կեանք և նոր ոգի մը ստացած էր: Բայց երէկ ոգևորութիւնը աւելի մեծ էր, և ատոր պատճառն ալ էր՝ անշուշտ Եւրոպայի հայ առաջնորդին և քանի մը վարդապետներու ներկայութիւնը: Փողովուրդը աւելի հոծ բազմութեամբ գիմնած էր հոն, պատարագ տեսնելու և քարոզ լսելու: Վարդապետ մը քարոզ մը խօսեցաւ եկեղեցւոյն վրայ: քարոզին միտքը և նպատակն էր հասկնել փարիզահայ հայերուն թէ՛ պարտ էին ամեն միջոց ի գործ գնել փարիզի մէջ մատուցող մը շինելու համար: Եստ գեղեցիկ, շատ փառաւոր գաղափար է փարիզի մէջ մատուցող մը շինելու գաղափարը: Բայց ինչո՞վ պիտի շինեն զայն և ո՞ւր:

Փարիզի մէջ քիչ շատ յարմար տեղ մը նոյն իսկ ամենափոքր մատուցող մ'ալ չինելու համար հարիւր հազարներ — եթէ ոչ միլիոններ պէտք են. արդ կը կարծուի թէ գիրքին է այդ մեծագուծար փողը հաւաքելը և եթէ հաւաքել ալ կարելի լինի ինչ պէտք է փարիզի մէջ հայկական մատուցող եղածը ինչ որ է՝ ձեռնառու է:

Աւելի լաւ չէ՞ր լինէր որ հաւաքուած կամ հաւաքելի դրամները աւելի անմիջական և օգտակար բաներու գործածուէին. զոր օրինակ սրբանոցներ հաստատելու գիտութիւնը, երկրագործութիւնը ծաղկեցնելու և նոյն իսկ Մայր-Երկրի վանքերն ու եկեղեցիները վերականգնելու:

Միթէ փարիզի հայերը յաւիտեանս յաւիտեանց փարիզ մնալ կը յուսան: Ս. ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՆԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչև ցարդ սովորութիւն չէ եղած կամ քիչ պատահած, որ հայ թերթերու վարչութիւնը մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Սոնկ կը պատահի որ այս ինչ կամ այն ինչ թիւր կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ և գրեթէ դատել անկարելի կըլլայ:

Մենք «Արշալոյս» ի հրատարակման առաջին օրէն, մեր սպասումին քանակը ինկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքածոյի համար աւելի սպազրել տուած և առաջին վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշալոյս» ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան գիմնել թերթի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Կաթկազմին համար 10 Քրանքի գումարով գրկելով մեզ:

ՀԷԼՎԱՆԻ ՎԻ ԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 27 ՄԱՅԻՍ 1900

Table with 6 columns of numbers: 2305, 6778, 6836, 2909, 2667, 1970; 2505, 2446, 4057, 4226, 4481, 4418; 4573, 4828, 5154, 5128, 6433, 6307; 7155, 7074, 7259, 8147, 8451, 8512; 8760, 8990, 9400

Հպարտքին ժողովրդական ճգնաժամ

Ա. ՊԱՐՏԱՔ

ԳԱՀՐԻԻ ԵՆԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀԱՄՈՒՐԿԻ, ՊՐՈՒՍԿԵԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել ինչ որ ատրիներ վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու առևտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարունակելէ և կատարեալ փորձառութիւն ստանալէ վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերն մեծ քանակութեամբ ապսպրանք տուած է և յետ այսու մինչև ցարդ ծախուածներն աւելի գեղջեալ գնելով պիտի վաճառէ:

Իրեն գիմող գնորդները կատարելապէս գոհացնելու և մինչև ցարդ այս առևտուրին շարժը տեղի ունեցած գոհութիւնները բաժնուրեւ մարմն չոգածութիւն պիտի ունենայ: Եւ անոնք որ Ա. Գլատի տոմսերը ունին իրենց քով, մինչև վերջին Գլատը լիարեւոյն չանդրծ իրենց պիտի գրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեցողութեանցին է Մուսքի մէջ Պ. ԳՕՆՕ-ՄՕՅԻ Պանքան:

Սոյն տոմսերն կը ծախուին նաեւ իմ օտարի Տիար Գ. Պալլոցեանի խանութի:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսերու գները:

Համպուրի 7 Գլատ. իւրաքանչիւրը 131)24 1/2, ամբողջ 96:

Պրոնովի 6 Գլատ. իւրաքանչիւրը 16 դրոշմ, ամբողջ 96:

ՄԱՆՕԹ. — Հունգարական տոմսերու Ա. Գլատի թիւերը արդէն հասած են և հրապարակ ելած: 8-8

ԿՈՊԵՌ ՊԵՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, աշխատին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլահ էրզարց ասն, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուներու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ աւանձին գործատեղի մը կը հիմնէ Եօզպէի յիշեալ Գամեշ ԾԹԷԼ ԵԿԷԼՐՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրուր կուսիներ ի հարկին:

Ակրանես/անան բնական մեծութեամբ: Կենդանագիրներ ամբողջական մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միմեքսիւր: Իւրաներկ և ջրաներկ պատկերներ և ընդ լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի յոքոռչ, ճեպիչոյքրան և ընդ: Իրեն գիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԳԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ ոչ է բնկերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՆԱՐ քնդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

ՏՈՐԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԵԱՆ

Ի Եստիս Գոր-Պեյ, թիւ 20

Իր ՉԻԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն սերտաբար օրեր կես օրէ առաջ ժամը (ը. ե. ) 9էն 11 սրտած ըլլալով կը ինդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի պիտութիւն իրեն գիմել ուղղակի ապրատ հիւանդներու: 4-8

ՏԻՐԱՆ ՀԻՐԱՄԻԶՅԱՆ

Եստիս Մոսակես Այիվիզարիա ղերարանին իով:

Իրեն գիմող յոճախորդաց, տոկոսն ապրանքներով և նորածնութեան համաձայն, ձեւաւոր հազուասներ պատրաստել կը խոտանայ խիստ շարաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հոն գիմողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի և ճաշակուոր ու ձեւաւոր զգեստ տեսնալու համար՝ գարձեալ Հիւրմըլչեանը պիտի փնտռէ: 5-8

ԳՐԵՑ ՈՐԶՈՂ ՆՍԲՈՒՆ

Գահիրէի և չլիակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը ստալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իստանբուլ, Կոնստանտնուպոլիս, Երզրակ, Իրանական Արաբական, Բալտաստրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիրքաձեռքելի պարաններով ձեւաւոր գրքով գիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Կալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՐԹ. ԺՈՐԾ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ապսիւն Եստիս Գուարի Թիս 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակումներ:

Կը գաղթեցնէ վայրկենապէս ակուպիցաւորը, ամերիկեան նորապոյն մեթօմով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակումներուն տոկոսութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ ապրատներու ճիւղ գարմանու, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԳԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ ոչ է բնկերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼԷՆԱՐ քնդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ: